Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականություն, ռուսաց լեզու, ինֆորմատիկա, ֆիզկուլտուրա, տեխնոլոգիա, երգ, կերպարվեստ, աշխարհագրություն, անգլերեն և մաթեմատիկա ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը , որին հավակնում է /Ձև 1/:
2.Փաստաթուղթ (դիպլոմ)՝ (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ), << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան որակավորման վերաբերյալ:
3.Անձնագրի պատճենը:
4.Ինքնակենսագրություն /Ձև 4/:
5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում /:
6.Մեկ լուսանկար 3 X 4 չափի:
7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք:
8.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում **2025թ. հունիսի 3-ից մինչև հունիսի 16-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 16:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա **2025թ. հունիսի 20-ին՝ ժամը 13:00-ին, Սյունիքի մարզի Ս. Առաքելյանի անվան Տաթևի միջնակարգ դպրոցում**: **Հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Տաթև, 1-ին փողոց, շենք 10:**
Տեղեկությունների համար զանգահարել՝ 098-707-831 կամ /0284/97-4-71 հեռախոսահամարներով: